

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների ուսումնասիրման նպատակով մշակված հարցաթերթը (տես հավելվածը) բաժանվել է 3 հիմնական մասերի: Դրանք են.

1. Ընդհանուր տեղեկություններ,
2. Դրամական միջոցներ,
3. Հրատարակումներ:

Հարցաթերթի մաս 1-ում բերված հարցերը բացի ոչ առևտրային կազմակերպության անվանման, գործունեության հասցեի և գրանցման համարի, ներառում է նաև ոչ առևտրային կազմակերպությունների անդամների, դրանց սեռային կառուցվածքի, տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկություններ, որոնք կիրառելի են սոցիալական վիճակագրության մեջ:

Նշվածից բացի, հարցաթերթում ներառվել է նաև հատուկ հարց կազմակերպության կողմից ծառայությունների մատուցման հիմնական ուղղվածության վերաբերյալ, որի նպատակն է ազգային հաշիվների համար տարանջատել տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների արտադրանքի (մատուցված ծառայությունների) ծավալն այլ հատվածներին պատկանող կազմակերպությունների արտադրանքի (մատուցված ծառայությունների) ծավալից: Մնացած ոչ առևտրային կազմակերպությունները, կախված իրենց դրամական միջոցների ստացման աղբյուրներից, դասվում են ոչ ֆինանսական, ֆինանսական կամ պետական հատվածներին:

Հարցաթերթի մաս 2-ում ներառված են կազմակերպությունների դրամական միջոցների մուտքերի, ելքերի և շարժի վերաբերյալ հարցեր:

Հարցաթերթի մաս 3-ում ներառված են կազմակերպությունների հրապարակումների, դրանց հրատարակման տարեթվի, պարբերականության և տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ, որոնք նույնպես նպատակահարմար են սոցիալական վիճակագրության վարման համար: